ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/6923-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-854-02.02.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 157 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-854-02.02.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվող կարգավորմանը հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների սահմանադրական իրավունքի իրացման ընթացակարգի համատեքստում:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 113-րդ հոդվածի, ինչպես նաև օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խմբակցությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը գրավոր հարցապնդումով դիմելու իրավունքն իրականացնում է իր որոշմամբ:

Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ խմբակցության կանոնադրությամբ սահմանվում է խմբակցության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու ընթացակարգը: Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենքը, սահմանադրաիրավական նորմերին համապատասխան, սահմանել է խմբակցությունների կողմից այդ իրավունքը սեփական հայեցողությամբ, իրենց իսկ որոշմամբ իրացնելու հնարավորություն՝ որպես լրացուցիչ երաշխիք նախատեսելով նաև գրավոր հարցապնդումներով դիմելու ընթացակարգը յուրաքանչյուր խմբակցության կանոնադրությամբ սահմանելու հնարավորություն: Հետևաբար, քննիչ հանձնաժողովի կողմից նման առաջարկով խմբակցություններին դիմելը չի բխում խմբակցությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը հարցապնդմամբ դիմելու իրավունքը սեփական նախաձեռնությամբ իրացնելու հնարավորությունից: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ քննիչ հանձնաժողովների կազմավորման՝ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված կարգի վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները պետք է ներկայացված լինեն քննիչ հաձնաժողովների կազմում, ուստի խմբակցությունը, մասնակցելով քննիչ հանձաժողովի իրավասությանը վերաբերող հարցերի քննարկմանը, անհրաժեշտության դեպքում, կարող է սեփական հայեցողությամբ, առանց քննիչ հանձնաժողովի առաջարկի գրավոր հարցապնդումներով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին: Ավելին, կարծում ենք՝ առաջարկվող կարգավորումն այս առումով խնդրահարույց է նաև նախագծի հիմնավորման մեջ վկայակոչված ակնկալվող արդյունքի ապահովման տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ օրենքով խմբակցությունների համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը գրավոր հարցապնդումով դիմելն իրավունք է, որն իրացվում է սեփական հայեցողությամբ, հետևաբար

քննիչ հանձնաժողովի առաջարկի հիման վրա խմբակցությունների կողմից հարցապնդմամբ դիմելը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշում ընդունելը պարտադիր չի լինելու:

Ինչ վերաբերում է քննիչ հանձնաժողովի կողմից հանձնաժողով հրավիրված Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին անդամի չներկայանալու և բացատրություններ չտալու դեպքում, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին անդամի պաշտոնավարման հարցը Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշում ընդունելու առաջարկ խմբակցություններին ներկայացնելու վերաբերյալ՝ նախագծով նախատեսվող կարգավորմանը, ապա հարկ է նշել, որ օրենքի 121-րդ հոդվածի 11-րդ մասի վերլուծությունից բխում է, որ խմբակցությունները կարող են առաջարկել ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշում միայն հարցապնդման քննարկման արդյունքով, ուստի, անհրաժեշտության դեպքում, նման որոշում ընդունելու հնարավորությունը ևս խնդրահարույց է:

Հարկ է նշել նաև, որ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք պարտավոր են, իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք իրավունք ունեն ներկայանալու և բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:

Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը:

Մինչդեռ նախագծով նախատեսվող կարգավորման արդյունքում, միևնույն է, բաց է մնում այն պաշտոնատար անձանց չներկայանալու և բացատրություն չտալու իրավական հետևանքի հարցը, ովքեր թեև ունեն նման պարտականություն, սակայն ազատվել են զբաղեցրած պաշտոնից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-854-02.02.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-854-02.02.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր՝ 4-րդ կետ.

« 1) որոշմամբ առաջարկ ներկայացնել Ազգային ժողովի խմբակցություններին՝ հանձնաժողով հրավիրված Կառավարության առանձին անդամի չներկայանալու եւ բացատրություններ չտալու դեպքում գրավոր հարցապնդմամբ դիմել Կառավարությանը, անրաժեշտության դեպքում ընդունել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված են քննիչ հանձնաժողովի լիազորությունները: Մասնավորապես, 3-րդ կետում նշված է, որ քննիչ հանձնաժողովը կարող է.

«որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ:»:

Մինչդեռ, որեւէ կետով առանձնացված չէ, թե նշված անձանց նիստի բացակայությունը ինչ իրավական հետեւանք է առաջացնում:

Սույն նախագծի միջոցով նախ քննիչ հանձնաժողովի լիազորությունները ավելանում է եւս մեկ կետով, իսկ երկրորդ՝ Կառավարության առանձին անդամի կողմից քննիչ հանձնաժողովի նիստերի չներկայանալու դեպքում որոշակի իրավական հետեւանք է առաջանում, որով կարգավորվում են հետեւյալ հարցերը՝

1. Կառավարության առանձին անդամի կողմից աշխատանքների պատշաճ կատարում,

2. քննիչ հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Այսպիսով, սույն օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է քննիչ հանձնաժողովի գործունեության արդյունքն ապահովելու անհրաժեշտությամբ:

Վերջինիս նպատակահարմարությունն առաջացավ նաեւ այն ժամանակ, երբ կատարվեց «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված եւ նրանց կողմից ընդունված ֆինանսական եւ այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը եւ արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի» կողմից կատարված աշխատանքների ամփոփում: Այդ հանձնաժողովի աշխատանքների կատարման արդյունքում որոշ պաշտոնատար անձանց նիստերին չներկայանալը եւ բացատրություններ չտալը գործնականում առաջացրեց մի շարք խնդիրներ: Այսպես, հանձնաժողովը հնարավարություն չունեցավ լսել եւ ստանալ այն տեղեկատվությունը կամ գրավոր տարբերակով ստացված տեղեկատվության մանրամասները, ինչը կարող էր հանդիսանար մի շարք խնդիրների լուծման պատասխաններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային Ժողովում ստեղծվել եւ ստեղծվելու են նոր քննիչ հանձնաժողովներ, ուստի անհրաժեշտ է նախագծի ընդունման անհրաժեշտությունը: Այլապես համոզված եմ, որ մյուս քննիչ հանձնաժողովները եւս կբախվեն նման խնդիրների եւ քննիչ հանձնաժողովի դերակատարությունը կդառնա ձեւական:

Այս նախագիծը զսպող մեխանիզմ է ստեղծում այն անձանց համար, ովքեր ստանձնել են որոշակի պաշտոններ եւ իրենց պարտականությունները չեն կատարում պատշաճորեն: Բնականաբար, եթե դրվի ընդհուպ մինչեւ պաշտոնավարման հարց, իրավասու պաշտոնատար անձը կխուսափի ոչ պատշաճ գործողությունների կատարումից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է կատարել լրացում, որով ավելանում է քննիչ հանձնաժողովի լիազորությունները եւ հնարավորություն է ստեղծվում կիրառել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի եւ 11-րդ մասի 1-ին կետի կանոնները:

3. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող հոդվածի լրացման արդյունքում ապահովվում է Կառավարության առանձին անդամի կողմից քննիչ հանձնաժողովի նիստերի մասնակցության հարցը, որը նպաստում է գործող եւ ստեղծվելիք քննիչ հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, համապատասխան պաշտոնատար անձանց կողմից աշխատանքների պատշաճ կատարմանը: